Արձանագրություն N 3

2023-2024 թվականների Առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ դեղերի ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/9/2» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «05» «Հոկտեմբերի» 2021թ.
ժամը 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ Վ. Հակոբյան

Հանձնաժողովի անդամներ Մ. Հարությունյան, Ն. Դանիելյան

Հանձնաժողովի քարտուղար Հ. Սարգսյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Վ. Հակոբյան)

Ընդունել ի գիտություն, որ 29.08.22թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2022 թվականի սեպտեմբերի 14-ին, ժամը 11:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2022 թվականի սեպտեմբերի 15-ին ժամը 11:00-ին: 2022 թվականի սեպտեմբերի 16-ին ժամը 11:00-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Սեդարս Գրուպ» ՍՊԸ	sedarsgroup@gmail.com	00897773
2	«Մի Վնասիր» ՍՊԸ	mivnasir.llc@gmail.com	01847238
3	«Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ	mercado@netsys.am	00471216
4	«Բեյբի Սիմ» ՍՊԸ	baby-sim@mail.ru	02237021
5	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ	natalipharm@bk.ru	01222567

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Վ. Հակոբյան)

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարներում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Վ. Հակոբյան)

16.09.2022թ. հրավիրված նիստի ընթացքում առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Սեդարս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը ուսումնասիրելիս, պարզվեց, որ վերջինիս կողմից չի ներկայացվել հրավերով պահանջվող իրական շահառուների տվյալների մասին հայտարարագիրը, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ օրով կասեցնել նիստը և էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով ծանուցեց «Սեդարս Գրուպ» ՍՊԸ-ին՝ «Հարգելի մասնակից խնդրում եմ շտկել Ձեր կողմից ներկայացված հայտը՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.2-ի կամ 1.3-ի (ներկայացված հայտարարագրի ձևին համապատասխան):»: Վերջինիս կողմից սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ համակարգ էր ներբեռնվել հրավերի պահանջներին համապատասխան՝ իր կողմից հաստատված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ հավելված 1.2: Ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց բավարար գնահատել «Սեդարս Գրուպ» ՍՊԸ-իհայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկաց գների մասին

(Վ. Հակոբյան)

Մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները 15.09.2022թ.-ին կայացած հակադարձ աճուրդից հետո ներկայացվում են կից ֆայլով (excel):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Վ. Հակոբյան)

Հրավերի վերաբերյալ 31.08.2022թ. վերաբերյալ ստացվել է հարցում, որի պատասխանը 02.09.2022թ. էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով ներկայացվել է հարցում ներկայացրած մասնակցին, և հրավերի պարզաբանման մասին հայտարարությունը հրապարակվել է gnumner.am կայքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին

(Վ. Հակոբյան)

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/9/2» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝ «Սեդարս Գրուպ» ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Ընթացակարգի ամփոփման մասին

(Վ. Հակոբյան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը՝

Որոշվեց.

1. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/9/2» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, հաղթող ճանաչել և կնքել պայմանագիր՝
   - «Սեդարս Գրուպ» ՍՊԸ-ն 105,840,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:
2. Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ մերժել «Նատալի Ֆարմ», «Թեոֆարմա Իմպորտ», «Բեյբի Սիմ» և «Մի Վնասիր» ՍՊԸ-ների հայտերը:
3. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/9/2» ծածկագրով գնման համար անգործության ժամկետ սահմանել 06.10.2022թ.-ից մինչև 15.10.2022թ.-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Վ. Հակոբյան

Անդամներ՝ ---------- Մ. Հարությունյան

---------- Ն. Դանիելյան

Քարտուղար՝ ---------- Հ. Սարգսյան

2022 թվականի կարիքների համար ձեռք բերվելիք մանկական կերերի վերաբերյալ
վերջնական գներով 15.09.2022թ. Կայացած հակադարձ աճուրդից հետո

NN	Դեղի անվանումը	Քանակ	Նախահաշվային		«Սեդարս Գրուպ» ՍՊԸ					«Մի Վնասիր» ՍՊԸ				
					Վերջնական առաջարկ					Վերջնական առաջարկ				
			Միավորի գին	Գումար	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով
1	Ֆենիլ ալանին չպարունակող ամինաթթվային խառնուրդ 1 տարեկանից բարձր երեխաների համար 60%	2,520,000	50.80	128,016,000	88,200,000	17,640,000	105,840,000	35.00	42.00	98,784,000	19,756,800	118,540,800	39.20	47.04

2022 թվականի կարիքների համար ձեռք բերվելիք մանկական կերերի վերաբերյալ
վերջնական գներով 15.09.2022թ. Կայացած հակադարձ աճուրդից հետո

NN	Դեղի անվանումը	Քանակ	Նախահաշվային		«Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ					«Բեյբի Սիմ» ՍՊԸ				
					Վերջնական առաջարկ					Վերջնական առաջարկ				
			Միավորի գին	Գումար	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով
1	Ֆենիլ ալանին չպարունակող ամինաթթվային խառնուրդ 1 տարեկանից բարձր երեխաների համար 60%	2,520,000	50.80	128,016,000	101,345,200	20,269,040	121,614,240	40.22	48.26	150,000,000	30,000,000	180,000,000	59.52	71.43

2022 թվականի կարիքների համար ձեռք բերվելիք մանկական կերերի վերաբերյալ
վերջնական գներով 15.09.2022թ. Կայացած հակադարձ աճուրդից հետո

NN	Դեղի անվանումը	Քանակ	Նախահաշվային		«Նատալի Ֆարմ» ՍՊԸ				
			Միավորի գին	Գումար	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով
1	Ֆենիլ ալանին չպարունակող ամինաթթվային խառնուրդ 1 տարեկանից բարձր երեխաների համար 60%	2,520,000	50.80	128,016,000	168,609,000	33,721,800	202,330,800	66.91	80.29